Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/28023/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 սեպտեմբերի 2023 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲ ընկերության ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի՝ «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար Ն. Գալստյանի 07.08.2023 թվականի թիվ 12 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

30.08.2023 թվականին «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Ա. Բալդրյանի կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի՝ խնդրելով անվավեր ճանաչել «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար Ն. Գալստյանի 07.08.2023 թվականի թիվ 12 որոշումը:

Դատարանի 05.09.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցիչը 11.09.2023 թվականին հայցադիմումը կրկին ներկայացրել է Դատարան, որը Դատարանում մուտքագրվել է 12.09.2023 թվականին, դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 13.09.2023 թվականին:

Կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորի ներկայացուցիչը խնդրել է անվավեր ճանաչել «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար Ն. Գալստյանի 07.08.2023 թվականի թիվ 12 որոշումը:

Դատարանն, ուսումնասիրելով կրկին ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի՝ «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար Ն. Գալստյանի 07.08.2023 թվականի թիվ 12 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Հայցադիմումը Դատարանում ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 30.08.2023 թվականը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ.ՋԱԼԱԼՅԱՆ**